ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Ս. Դավթի 87ա

« 08 » դեկտեմբեր 2022թ.

**ՈՐՈՇՈՒՄ No. 3180-Ա**

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Արման Մնացականյանս, քննարկելով ֆիզիկական անձիք Գևորգ Վարուժանի Մինասյանի և Վարուժան Շավարշի Մինասյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը,

**ՊԱՐԶԵՑԻ**

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ թիվ 3695/2022/ԿՈՒՎ4/Ա և թիվ 3696/2022/ԿՈՒՎ4/Ա արձանագրությունների /կցվում են/ ֆիզիկական անձիք Գևորգ Վարուժանի Մինասյանի (Հասցե՝ Արմավիր, Վաղարշապատ, Բաղրամյան փ.,17 տուն, ՀՎՀՀ՝ 52193442, ՀԾՀ՝ 1203770529 ) և Վարուժան Շավարշի Մինասյանի (Հասցե՝ Իսպանիա , ՀՎՀՀ՝ 49739409, անձնագիր՝ X61102875) չկատարված համապարտ հարկային պարտավորությունը 14.07.2022թ. դրությամբ կազմել է 833.291 դրամ, որից հարկ՝ 644.962 դրամ, տույժ՝ 188.329 դրամ:

Վերոհիշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունը գանձելու վերաբերյալ վարչական ակտ ընդունելու նպատակով 09.11.2022թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողները պատշաճ կերպով ծանուցվել են, սակայն չեն ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չեն տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ՀՀ Կառավարության 05.10.2017թ-ին թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Գևորգ Վարուժանի Մինասյանը Վարուժան Շավարշի Մինասյանի հետ համատեղ 19.06.2019 թ-ին օտարել են Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Բաղրամյան փ.,17/1, 17/2 խանութ հասցեում գտնվող անշարժ գույքը, որի պայմանագրային արժեքը կազմել է 6.449.625 ՀՀ դրամ:

ՀՀ հարկային օրենսգրքի (մինչև 29.06.2019 թ-ի գործող խմբագրությամբ) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ տվյալ գույքի օտարումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում և գույքի օտարումից ստացվող եկամուտները այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

ՀՀ հարկային օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը, հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավոր է մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով եկամտային հարկի տարեկան հաշվարկ և վճարել դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի: ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի


0015, Երևան, Մ. Խորենացի 3,7 Հեռ. +374 60 84 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

10-րդ մասի համաձայն՝ գույքի օտարումից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանցից ստացվող ամբողջ եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է տասը տոկոս դրույքաչափով:

Ֆիզիկական անձիք Գևորգ Վարուժանի Մինասյանի և Վարուժան Շավարշի Մինասյանի կողմից չի ներկայացվել 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և չի վճարվել եկամտային հարկի գծով պարտավորությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի, ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից պահանջել կատարելու պարտավորությունն ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասով:

2. Համապարտ պարտապաններից մեկից լրիվ բավարարում չստացած պարտատերն իրավունք ունի չստացած մասը պահանջել մյուս համապարտ պարտապաններից:

3. Համապարտ պարտապանները պարտական են մնում այնքան ժամանակ, քանի դեռ պարտավորությունը լրիվ չի կատարվել:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված համապարտ պարտավորությունը 14.07.2022թ. դրությամբ կազմել է 833.291 դրամ, որից հարկ՝ 644.962 դրամ, տույժ՝ 188.329 դրամ,որն առաջացել է ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի օտարման գործարքի արդյունքում՝ ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, ինչպես նաև հարկային պարտավորությունները սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով՝ ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի**

1. ֆիզիկական անձիք Գևորգ Վարուժանի Մինասյանից և Վարուժան Շավարշի Մինասյանից համապարտության կարգով գանձել **833.291** դրամ պարտավորության գումար համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

**14.07.2022թ. դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ**

**Չափման միավորը՝ դրամ**

| Հ/Հ | Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը | Հաշվարկված հարկ/վճար | | Հաշվարկված տույժ | Հաշվարկված տուգանք | Ընդամենը | Վճարման ուղղությունը | Հաշվի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առաջացման ամսաթիվ | գումար | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7= 4+5+6 | 8 | 9 |
| 1 | Եկամտային հարկ | 20.04.2020թ | 644.962 | 188.329 | - | **833.291** | պետական բյուջե | 900008000490 |

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ապահովող ծառայություն:
3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել հարկ վճարողին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝*

***Հարկ վճարողի չկատարված պարտավորությունների գանձման վերաբերյալ հարկային մարմնում առկա մեկից ավելի վարույթների շրջանակներում ընդունված և ուժի մեջ մտած որոշումներով գանձման ենթակա ընդհանուր պարտավորությունը 1.500.000 ՀՀ դրամ գումարը գերազանցելու դեպքում, որոշումներն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորությունների վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:***

Կատարող՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների
կոմիտեի իրավաբանական վարչության հարկադիր գանձման և
պարտավորությունների կատարման ապահովման բաժնի
առաջատար մասնագետ Սեդա Ասատրյան, հեռ. 011-54-91-91 /91-27/: